ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների (ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատասենյակների հատակի լամինատե ծածկույթի փոխարինման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **01.07.2025թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Արա Խաչատրյան
Ցոլակ Հակոբյան
Աշոտ Բալայան
Էլեն Ստեփանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու և պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/55» ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից **«ԼԻՆԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին** «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ 2025 թվականի հունիսի 20-ին, էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, ինչպես նաև հանձնժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (2025 թվականի հունիսի 27-ը ներառյալ) չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները, իսկ համակարգի միջոցով չի ընդունել կամ մերժել իրեն ներկայացված առաջարկը:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ **«ԼԻՆԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին** զրկել պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնման ընթացակարգի գահատման նոր՝ փոփոխված արդյունքների մասին.

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետն ու «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-25/55» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.20-րդ կետը, ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած **«ԱՆԺ» ՍՊԸ–ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և այն հրապարակելուց հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետով՝ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **«ԼԻՆԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան

_____ Արա Խաչատրյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Աշոտ Բալայան

_____ Էլեն Ստեփանյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/